Պիղծ Սապէթային սատանայ կազեալ.
Որ ի ձախ կացեալ նմա պաշտպանեալ.
Ի յայնըմ պահու ընդ յաջ էր անցեալ.
Եւ լէպէօնեանք ընդնա պաշարեալ:

(Տպագիրը չունի այս տունէն մինչեւ վերջ):

Սուրբ կոչիւր ազգին բարի քարոզեալ.
Կիսին Ժողովուրդ Մահմէտի եղեալ.
Զմեսիայ անուն էր ձեռն իրիցեալ.
Զմովսէս ուրացեալ եւ տաճիկ դարձեալ:

Զի սկըզբնաչարին գործարան դտեալ.
Որ սատանայի գործն յաւարտ առեալ
Եւ ըզխեղճ ազգ իւր ի լեզու արկեալ
Զի համայն ազգիք զհրէայս ծանակեալ:

Եւ հրաման փրկչին յայսմիկ կատարեալ
Զի սուտ մարգարէք քրիստոսք յառաջեալ
Ահայ նախընթաց նեռինն այս հասեալ
Որդւոյն կորստեան կարապետ յայտնեալ:

Զկին Սապէթային Պօղոսէն տարին.
Եւ զորս ընդ նմա անդ աճիկացուցին
Ի տեսս ռամկաց զնա մեծարեցին.
Զափուճի պաշի կարեալ արքային:

Եռուն ի զպրոց ցՎանի էֆէնտին.
Դասակից եղեն ընդ Կլընպօղին.
Եւ եւս զի հրէայ մի տեսցէ բնաւին.
Զի խոր թուրքասցի զդայրանք ջհտին:

(Կարմրաւ): «Աւարտումն բանիս եւ դաւանութիւն· երգոյս երգողի յիշատակարանաւ»:

Այլ ես դաւանիմ եւ խոստովանիմ.
Ըզհայր եւ զորդի եւ ըզսուրբ հոգին.
Ի միակ բնութիւն եւ յեռակ անձին.
Համայնից ստեղծող տէր եւ թագաւոր:

Ցորոց մինն անձանց որդին միածին.
Գոլ անժամանակ անմայր ի յերկին.
Իջեալ ի յերկիր ի յարգանդ կուսին.
Եւ անհայր ծընաւ ժամանակաւոր:

Սոյն ծընունդ մաքրական եւ անապական.
Անսերմն էր յղացումն եւ սքանչելական.
Անախտ զոլ կընքոյն ի յետ ծննդեան.
Մայրըն կոյս մնացեալ հրաշիւք փառաւոր:

Բացութեայ հովուացն փառօք յայտնեցաւ.
Ցերկնայնոց դասուցըն փառաբերեցաւ.
Մոգուց պատուեցաւ երկրպագեցաւ.
Ընկալեալ զընծայսն մեծ խորհրդաւոր:

Աւրէնդիր տէրն ի յօրէնս մտեալ.
Զի քառասնաւուրբ ի տաճարն եկեալ.
Զգուսն ինքնին բացեալ զկապեալն արձակեալ.
Դաւանումն ծերոյն լոյս եւ լուսաւոր:

Նորն Ադամն եկեալ զհինն Ադամ սրբէր.
Իջեալ Յորդանան ծառայն մկրտէր.
Որդի սիրական հայրըն վկայէր.
Ընդ հօր եւ հոգւոյն աստուած զուգաւոր:

Եղեւ օրինակ մեզ խոնարհութեան.
Եղ մեզ ճանապարհ սիրոյն բարութեան.
Աւետարան էր զիւրոյն տեսութեան.
Զի յինքն յօգեսցէ զիւր նըմանաւոր:

Բամ մեզաւորաց զմեղանսըն քաւէր.
Զբորոտըս սրբէր կաղըս դնացնէր.
Հիւանդս բըժըշկէր զկոյրս լուսաւորէր.
Զմեռեալս յարուցեալ աստուած զօրաւոր:

Ելեալ ի խաչի կամաւ բարձրացաւ.
Եւ զարիւնն ի գին աւար զմեզ առաւ.
Բացումըն կողին բնութիւնս բաժրացաւ.
Որպէս զաղբակից եւ ժառանգաւոր:

Մահուամբ կենսատուին մահըն մեր լուծաւ.
Յարութեամբ նորին կեանք մեզ շնորհեցաւ.
Համբարձմամբն յերկինս բնութիւնս բարձրացաւ.
Ընդ աստուած հաղորդեալ քան զհրեշտակս աղվոր:

Ի սոյն կանոնի սրբ մխարանին.
Սուրբ փառաց նորա արժանաւորին.
Որպէս խոստացաւ թէ ուրեմն լինիմ.
Պաշտօնեայքն իմ անդ զոլ սեղանաւոր:

Աւուրն յեանումն որ գայ ի դատել.
Թէ բարի կամ չար որք կան աստ գործել.
Ըստ գործոց հանուրց վարձս փոխանորդել.
Որպէս թագաւոր տէր եւ դատաւոր:

Յուսով սոյն կապեալ ծառայս յիսուսի.
ԵՐԵՄԻԱՍ կոչեալ ԴԱՐԱՆԱՂԵՑԻ.
Նախնեաց պանդխտեալ արդ Բիւզանդեցի.
Ի խնդրոց բազմաց զայս չարաչրեցի:

Ի սուրբ աղօթս ձեր յիշել զիս գերի.
Զի տեսն յիսուսի մեզ հանդիպեսցի.
Ներել զանցանս մեր եւ զձերրդ ձրի.
Արժանաւորիլ փառացն արքունի:

«Աւարտումս բանիս...» մասէն սկսեալ տանց սկզբնատառերը կը կազմեն ԱՅՍ ԲԱՆ ԵՐԵՄԻԱՅԻ: Ինչպէս ըսինք, այս մասը, ինչպէս նաեւ անկէ առաջ հինգ տուն, հրատարակութեան մէջ չկայ, ինչպէս նաեւ 30րդ տունէն մինչեւ 35րդ տունը չկայ հրատարակութեան մէջ:

(Շար· 2)

Յ· ՔԻԻՐՏԵԱՆ

ԶԱՐՄԱՀԱԼ ԳԱԻԱՌԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Շար· տե՛ս «Բազմավէպ» 1967, թ· 1–2, էջ 24)

Շան կծածի դէմ

Վրան դնել անալի պանիր կամ նոյն պանրի մէջ դնել սեւ չայի փոշ (դրամ): Երբ պանիրը ժանդ բռնէ, դնել վէրքի վրայ: Կամ՝ շան մաղից կտրել, այրել, տրորել եւ դնել կծած տեղը:

Անքնութեան դէմ

Երեսսրբիչի մէջ ծայրը ջրով թրջել, պառկելիս՝ դնել ծոծրակի վրայ եւ ծածկել նոյն երեսսրբիչի չոր ծայրով, որպէսզի թացութիւնը չուտով չանցնի:

Ուշքից գնալ (նւաղել)

Իսկոյն պառկեցնել, շորերը (զգեստը) արձակել եւ երեսին սառը ջուր սրսկել, իսկ երեսն ու մարմինը ձեռքերով շփել: Ուշքի գալուց յետոյ, հինգ վայրկեան պառկած պահել եւ մի քիչ գինի, օղի կամ թէյ, սուրճ խմացնել:

Ցրտից սառածին

Շորերը (զգեստը) հանել եւ հով տեղում, սառը ջրի մէջ դնել կամ ձիւնով մարմինը տրորել: Երբ մարմինը տաքանայ եւ անդամները փափկին, մի տաք սենեակում պառկեցնել եւ օղի, գինի կամ տաք թէյ խմացնել: Եթէ մի մասը կամ ոտն է սառել, սառը ջրի մէջ պահել կամ ձիւնով տրորել, ապա կամաց–կամաց տաքցնել եւ սառած մասերին ձէթ կամ սալի ճարպ քսել:

Հարբեցութեան դէմ

Հարբեցողի գլխին սառը ջուր ածել եւ պառկեցնել: Եթէ սաստիկ հարբած է, թէ՛ սառը ջուր խմացնել եւ թէ՛ գլխին ածել: Շուտով կերածը յետ է գցում (փըսխում) եւ հանգստանում է: Իսկ գինեմոլին խմիչքից հեռու պահելու համար՝ իր մէջը գինու հետ խառնել եւ խմացնել. զզւում է եւ դադարում խմելուց:

Մայասիլ (բաւասիլ – թուրք կամ քաամի)

Դուրս եկած փոքրիկ պտուկները մաքուր, ջրի մէջ եռացած, մկրատով կտրել, ապա աթթարից դնել երկու մսալ դանֆռանկի, որը սանդում ծեծել, մաղել եւ երեք օր վէրքի վրայ չաղ տալ: Կամ ուղտի մէջն երեք անդամ խմել:

Ոջլի դէմ

Թթու նռան կեղեւը եւ խնկի փոշին չիրիկ ձիթով եռացնել եւ տարին երկու անդամ մարմինն օծել: Կամ ժիպակը դնել եւ մի քիչ թթով շաղուել հինայի հետ, ապա փոքր քսակի մէջ լցնել եւ պարանոցից կախել կամ ծոցում պահել: Ոջիլները կ'անյայտանան:

© National Library of Armenia

Լուի դէմ

Տատասկի ջուրն առնել եւ ներկել կըտաւը, չորացնել եւ քնելիս կտաւը կամ վրան առնել, կամ ներքեւում փռել: Լուերը չեն կարող մօտենալ:

Քրտնած ոտքերի դէմ

Ոտքերը ջրով լուանալ, չորացնել եւ ծածկել այրած ու մանր փոշիացրած չիպով: Մի քանի անգամ նոյն միջոցը կըրկնել: Քրտինքը բոլորովին կը կտրուի:

Ոտքերը քաշուելու դէմ

Երբ ոտքերը սառում են, քաշւում են եւ ցաւում: Մի ղաղան ջուր տաքացնել եւ վրան մի սալաք դնել. երբոր ծակոտիկներից սկսի գոլորշի բարձրանալ, ոտները վրան դնել եւ անմիջապէս ծածկել:

Ոտքերն ուռել

Առուի ափերից քաղել դէյթարան կոչուած անուշահոտ խոտը, որ քիշնիկի նըման է. սանդում ծեծել եւ եփած կամ անեի կապել ոտքի ուռած տեղը: Եթէ ամառ ժամանակ է եւ ուռածն էլ շատ է, բդի (ուռենու) ծառի տերեւը կապել, իսկ եթէ ձմեռ է, ոչխարի կամ ուլի նոր քերթած տաք կաշին, իշու ապրով, մուխ տալ եւ փաթաթել ոտքերի ուռած մասի վրայ:

Ոսկրացաւ

Վրան օղի քսել եւ արեւում պահել: Եթէ չօղնի, աթթարից դնել տասը մսղալ գուլէնջուն, տասը մսղալ սուլէնջուն, ապա առանձին-առանձին ծեծել եւ ամէն մէկը չորս բաժակ ջրով ջոկ-ջոկ եփել: Երբ մի բաժակ ջուր դառնայ, ամէն մէկը տաքացնել եւ հերթով խմել:

Քամի (Սիֆիլիս)

Զարմահալում այս վարակիչ հիւանդութեան ասում են քամի: Բժշկութեան համար երկու ամիս անալի (առանց ապի) հաց եւ գլխաւորապէս կաթ, ձու եւ կարագ ուտել: Յետոյ աթթարից դնել կէս չարէք չինի եւ օրական հինգ մսղալ չինի երեք բաժակ ջրով եռացնել, մինչեւ մի բաժակ դառնալը եւ խմել: Այս հիւանդութիւնն ունեցողը պէտք է իր սիրտն ուրախ պահի, իսկ եթէ մարմնի վրայ վէրք ունի, այն ժամանակ դանաֆուանկին ծեծել ալիւրի նման եւ վէրքի վրայ շաղ տալ: Երբ վէրքն անցնի, երեք օր անցած տեղը կովի իւղ քսել:

Երեխայի ծնունդ

Երեխան ծնուելիս երբ ծուռ է լինում, այն ժամանակ մօրն երեսի վրայ պառկեցնել եւ ոտքերից բռնելով մի անգամ թափ տալ, ապա՝ դարձնել կոնակի վրայ եւ նորից ոտքերից բռնելով մի անգամ էլ թափ տալ: Այնուհետեւ երկու ձեռքերով փորի տակից սեղմել դէպի վերեւ: Դրանից յետոյ ծննդաբեր կնոջը կանգնեցնել: Այդ ժամանակ ծննդականը եւ տատմէրը կոնակներն իրար են կպցնում, իսկ տատմէրը բռնելով ծննդաբեր կնոջ երկու թեւերից, մի վայրկեան բարձրացնում է իր կոնակի վրայ: Երեխան ուղղւում է եւ մայրը ցաւով ծնում: Եթէ երեխան չի ուղղւում, այն ժամանակ տատմէրն օճառով մաքուր լուանում է ձեռքերը եւ բութամատը տանելով արգանդի մէջ, երեխայի գլուխն ուղղում է:

Եթէ երեխան «ձիաւոր» է, այսինքն՝ ոտքերից միայն մէկն է դուրս գալիս, այն ժամանակ տատմէրը մօր ոտները բռնելով՝ թափ է տալիս դէպի վերեւ, մինչեւ ոտը նորից ներս մտնելը, ապա մատներով միացնում է ոտքերը եւ ուղղում:

Երեխայի ծննդից յետոյ եթէ մայրը շատ ցաւ զգայ, բրդեղէնը տաքացնել, փաթաթել փորին եւ քրտնացնել, ապա խմեցնել մի բաժակ սուրճ, առանց շաքարի: Յետոյ երկու հաւկիթ ջրի մէջ քիչ տաքացնել եւ կերցնել: Այնուհետեւ տասն օր շարունակ եռացրած նարաթջուր տալ, իսկ չորս օր երբեք սառը ջուր չտալ: Դրանից յետոյ մօրը չորս օր կերակրել եռուուով, իսկ չորս օր անց կերցնել բրուշտուկ:

Երեխայի կերակուրը – առաջին երկու օրը տալ նարաթջուր, իսկ երրորդ օրը նարաթը եւ մայանան խառնել, ծեծել, ապա մաղմալով մաղել, ածել իւղի վրայ եւ կերցնել:

Երեխայի պորտը – երեք մատ երկարութեամբ կապել բամբակէ երեք տակ թելով եւ մկրատով կտրել, ապա օրն երեք անգամ իւղով ճարպել:

Ծծի ուռուցք

Երբ կաթը ծծի մէջ քարանում է եւ ցաւում, առուի ափերից քաղել արբիթեղ եւ եղան լեղու կոչուած խոտերը, որոնց իրար հետ խառնել եւ ծեծել, ապա վրան ածել հինգ մսղալ դարեալիւր եւ մի բաժակ կովի կաթ, մի բոպէ եռացնել եւ դընել ծծի վրայ, մինչեւ հասնելը: Երբ փափկի կամ կարմրի, նշանարով ծակել: Եւ կամ՝ կովի լեղուի ջուրը դատարկել եւ կաշին մի բոպէ դցել կովի կաթի մէջ եւ դնել վէրքի վրայ: Ապա մի բարակ, մաքուր թուղթ կլորել, թաթախել կովի լեղուի եւ կունջեթայի մէջ, ապա մտցնել վէրքի ծակի մէջ:

Արգանդը սառելու դէմ

Հաւի մի չարէք ալրը երկու լիտր ջրով եռացնել, ապա ջրի վրայ մի սալաք դընել, նստել սալաքի վրայ եւ փաթաթուել:

ՎԻՐԱԲՈՅԺՆԵՐ

Զարմահալի հայարնակ գիւղերում եղել են նաեւ վիրաբոյժներ, որոնք նոյնպէս իրենց բժշկական գիտութիւնը հաղորդել են ժառանգաբար, այսինքն՝ յաջորդել են որդուց որդի եւ բաւական հմտութեամբ բժշկել են վնասուած ոսկորները: Նրանք զանազան դեղեր են քսել եւ տախտակներ դնելով՝ փաթաթել եւ առողջացրել են:

Զարմահալի հայ իրականութեան մէջ, որպէս հմուտ վիրաբոյժ, Մամուռան գիւղում յայտնի է դարձել Մաթուսաղա Աւետիքեանը: Ծնուել է նա Զարմահալում: Երիտասարդ հասակից սովորել է բժշկութիւնը եւ իրեն նուիրել գեղջուկների բըժըշկութեան վեհ գործին: Իր բժշկական գիտելիքների համար օգտուել է իր պապերից: 38 տարեկան, համեստ, հիւրասէր եւ բարեսիրտ այս գեղջուկը բուժել է ո՛չ միայն գեղջուկների, այլեւ անասունների կոտրած կամ դուրս ընկած ոսկորները: Ահա նրա տուած բացատրութիւնները.

Ձեռքի դուրս ընկած ոսկրը

Երբ խաղերն իրարից բաժանւում են, այսինքն՝ յօդերից կամ ոսկրից մէկը դուրս է ընկնում, ձեռքն ուռում է եւ այլեւս մատները չեն շարժւում: Այդ ժամանակ տաք ջրի մէջ լծու ճարպու դցել, ապա ձեռքը դնել ջրի մէջ եւ ճմլել. երբ ձեռքը կակղում է, մի հոգի պահում է հիւանդին, իսկ վիրաբոյժը քաշում է մատները եւ խաղերը, յօդերն ու ոսկորը տեղաւորում է իր տեղը:

Ոսկորը ճաքած

Հինգ մսղալ խունկը ծեծել, մաղմալով մաղել, ապա օղիով շաղախել, քիչ տաքացնել, քսել ճաքած ոսկորի վրայ եւ պինդ կապել: Այդպէս թողնել, մինչեւ ցաւի կտրուելը:

Ոսկորը կոտրած

Նախ ստուգել, թէ ոսկորն ի՞նչ ձեւով է վնասուած, ճաքա՞ծ է, թէ՞ կոտորուած: Եթէ կոտորած է, վերցնել կէս մետր կտաւ, ապա ձուի դեղնուցը եւ ծեծած տորօնը իրար խառնել եւ փռել կտաւի վրայ. ոսկորն իր տեղը դասաւորելուց յետոյ, կտաւն ամուր փաթաթել վրան եւ

© National Library of Armenia

պինդ կապել։ Կաւի վրայ դնել նաեւ բարակ շերտերով տախտակներ եւ նորից կապել։ Ապա ձեռքը կրծքին դնել եւ թաշկինակով վզից կապել։ Հիւանդը 15 օր պէտք է իւղալից կերակուրներ ուտի, իսկ սառը ջուր երբեք պիտի չխմի։ Նոյնպէս աթթարից դնել 2–3 հատ գօրսը քամար, կճեպը մաքրել եւ կորիզը խառնել բրուշտուքի մէջ եւ կերցնել հիւանդին։

Կողքի կոտրած ոսկորներ

Եթէ կողի ոսկորները վնասուեն, օդին տաքացնել և ծեծած խունկի հետ խառնելով քսել մի կտաւի վրայ։ Ապա հիւանդին տալ մի դատարկ շիշ եւ պատուիրել, որ ուժեղ փչէ։ Կոտրած ոսկորները շիշը փըչելիս դասաւորուում են իրենց տեղը։ Այդ ժամանակ կտաւը կպցնել կոտորուած ոսկորի վրայ։ Կտաւը չպոկել, մինչեւ լաւանալը։

* * *

Ահա սրանք են Զարմահալի ժողովրդական բժշկութեան դիտելիքներն ու դեղատոմսերը, որոնց դարերի ընթացքում դեղջուկների միտքն ու խմաստութիւնը գործադրել են զանազան հիւանդութիւնների համար։

Հիւանդների բժշկութեան համար ժողովրդական այդ դիտելիքները, բացի գործնական խոշոր նշանակութիւնից, ներկայացնում են նաեւ պատմական արժէք այն տեսակէտից, որ ժողովրդական բժշկութեան մէջ գործածական դեղատոմսերը, որոնք տասնեակ սերունդների փորձառութեան բովից են անցել, հայ գիւղացիները 1605 թուին, Շահ-Աբբաս Մեծի բռնի գաղթի ժամանակ, Հայաստանից իրենց հետ բերել են Իրան եւ նոր միջավայրում օգտուելով լեռնային, դաշտային բոյսերից, խոտերից ու արմատներից, աւելի զարգացրել եւ հարստացրել են բժշկական դիտութեան գանձարանը։

Անհրաժեշտ է միայն, որ հայ մասնագէտ բժիշկներն ուշադիր ուսումնասիրութեան ենթարկեն այդ դիտելիքներն ու դեղատոմսերը եւ օգտագործեն բժշկական դիտութեան մէջ։

(Վերջ)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ԲԱՆԱԴՈՂ ՅՕԳՈՒԱԾԱԳԻՐ ՄԸ

Տարիներ առաջ, առիթը ունեցած էինք, «Բազմավէպ»ի էջերուն մէջ, «Բանադող վիպասան մը» (Բազմ. Նոյ–Դեկտ. 1953, էջ 226) եւ «Երեւոյթան բանադող մը (Բազմ. Յուլիս–Օգոստոս 1957, էջ 170) խորագիրները կրող յօդուածներով, երկու բանադողեր երեւան հանելու։

Ահա ուրիշ մը եւս, որ յօդուածի մը բանադողն է։

Անցեալ տարի, տաղանդաւոր գիւղագիր Համաստեղի ծննդեան 70ամեակը եւ գրական գործունէութեան ալ 50ամեակն էր։

Ամբողջ Հայութիւնը, անխտիր, փութաց յարգանքի տուրքը վճարելու իր պանծալի մէկ դաւակին, որ, աւա՜ղ յոբելինական հանդէսի մը ընթացքին, իրեն հանդէպ ցոյց տրուած ժողովրդական խանդավառ համակրանքին եւ գնահատանքին համար շնորհակալութեան խօսքը արտասանելու միջոց, կ'ինար բեմին վրայ, փառատօնը սգատօնի փոխելով։

Լրագիրները եւ թերթերն ալ իրենց թանկագին բաժինը բերին մեծարանքի այս ցոյցերուն։

Նիւ Եորքի մէջ հրատարակուող «Կիլիկիա» պարբերաթերթին մէջ, սակայն, Համաստեղի նուիրուած յօդուած մը, որ «Գիւղը Համաստեղի պատմուածքներուն մէջ» վերնագիրը կը կրէ, գրեթէ ծայրէ ծայր, շատ աննշան փոփոխութիւններով, օրինակութիւնն է Ռ. Դարբինեանի յօդուածին, որ 1924ին՝ «Հայրենիք» ամսագրին մէջ լոյս տեսած և 1966ի «Բագին»ի՝ Համաստեղին նուիրուած բացառիկին մէջ արտատպուած է։

Բանադողը՝ Զ. Ք. Մ. ստորագրութեան ներքեւ ծուարելով, փորձած է ուրիշի փետուրներով զարդարուիլ։

Փոխանակ քիչ մը յողնելու եւ Համաստեղի գործերը երկար բարակ ուսումնասիրելու, մեր բանադողը՝ յօդուած գրելու գիւրին ճամբան գտած է։ Ուրիշի պատրաստած ապուրը, առանց նոյնիսկ տաքցընելու, առանց իր կողմէ մեծ բան մը աւելցնելու վրան, գրեթէ նոյնութեամբ, կը հրամցնէ ընթերցող հասարակութեան։

Գողերը, երբ օձիքնին վրայ տալու ըլլան, իրենց յանցանքին ծանրութեան համաձայն, պատիժի կ'ենթարկուին։ Բանադողները, սակայն, կը մնան անպատիժ։

Զանոնք հրապարակաւ խայտառակելով, կը կարծենք արդար գործ մը կատարած ըլլալ, զգուշացնելու համար նաեւ ուրիշները նման նուաստացուցիչ սըխրագործութիւններէ։

Վարը, գիմացէ գիմաց կը դնենք, Ռ. Դարբինեանի յօդուածէն օրինակուած մասերը եւ բանադողին գրութիւնը։

© National Library of Armenia